ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/72

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարտիրոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բաց ընթացակարգ, ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԲԸՀԱՇՁԲ-16/6»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2616-2022 գրությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 08.02.2022թ.-ի թիվ 02/16.4/1048-2022 գրության հիման վրա, 15.02.2022թ.-ին «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.02.2022թ.-ին:

15.02.2022թ.-ին www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/72 համարի ծածկագիրը:

24.02.2022թ.-ին և 11.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2022թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 08.02.2022թ.-ի թիվ 02/16.4/1048-2022 (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի և <<Կանժիլստրոյ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 15-ին կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների կատարման N ԲԸՀԱՇՁԲ-16/6 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Պայմանագիրը միակողմանի լուծել է: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին տեղադրվել է www.gnumner.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Տեղեկացնում եմ, որ <<Կանժիլստրոյ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ Պայմանագիրը կնքելու տարում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը կարգավորվում էր ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2616-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 24.02.2022թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

«Այսպես. Պատվիրատուի և Ընկերության միջև 15.11.2016թ.-ին կնքվել է պետական կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ԲԸՀԱՇՁԲ-16/6 պայմանագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը՝ Պատվիրատուն 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Պայմանագիրը միակողմանի լուծել է: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 17.12.2021 թվականին տեղադրվել է www.gnumner.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով լիազոր մարմնին է ներկայացրել 08.02.2022 թվականին թիվ 02/16.4/1048-2022 գրությամբ:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն՝ 17) պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Նույն կարգի համաձայն՝ 122. լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմում է կենտրոնին՝ առաջարկելով ուսումնասիրել ներկայացված նյութերը և հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց: Ընդ որում, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար պատվիրատուն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի հայտնաբերման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Նշված փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմում է կենտրոնին:

Վերը շարադրվածով պայմանավորված, կարող ենք արձանագրել, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից՝ այն է՝ 18.12.2021 թվականից, սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմնին միայն 08.02.2022 թվականին, որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, այդ թվում՝ մասնակցի տվյալները, լիազորված մարմին ներկայացնելու Կարգով սահանված ժամկետը:

Համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Կարգով սահմանված ժամկետում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը, իսկ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, հակառակ դեպքում Կարգով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին և կհանգեցնեն կամայականությունների:

Ընդ որում օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար, տվյալ դեպքում, ժամկետի խախտման հանգամանքները չեն էլ կարող դիտարկվել, նույնիսկ եթե առկա լինեն:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշման իրավաչափությունն այս պահին քննվում է թիվ ԵԴ/54079/02/21 քաղաքացիական գործով: Նշված գործով մեր կողմից ներկայացվել էր նաև հայցի ապահովման միջնորդություն՝ մասնավորապես՝ արգելել Պատասխանողին և երրորդ անձին կատարել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեն Պատասխանողի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի նախաձեռնմանը, որը Դատարանի կողմից մերժվել է, սակայն մեր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա գտնվում է ՀՀ վերաքննիչ դատարանի վարույթում, որի վերաբերյալը որոշումը կհրապարակվի 03.03.2022 թվականին:

Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման որոշման իրավաչափության հարցին անդրադառնալիս, խնդրում եմ հաշվի առնելով նաև թիվ ԵԴ/54079/02/21 քաղաքացիական գործով մեր կողմից և սույն առարկությանը կից ներկայացված հայցվադիմումի փաստական հագամանքները, իրավական հիմքերը և հիմնավորումները՝ որպես սույն գործով մեր կողմի լրացուցիչ դիրքորոշում:»:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/72 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.11.2016թ.-ին կնքվել է թիվ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշվով սահմանված ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարումը պետք է իրականացվի մինչև 10.12.2016թ., որն այնուհետև համաձայնագրերով երկարաձգվել է:

iv. www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում՝ «Մինչև հոկտեմբերի 1-ը կնքված պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 17.12.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.11.2016թ.-ին կնքվել է թիվ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր՝ 311 046 288 (երեք հարյուր տասնմեկ միլիոն քառասունվեց հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ գումարով: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետը՝ պատվիրատուի կողմից պայմանագիրը աշխատանքների չկատարած մասով մասնակի միակողմանի լուծվում է:

v. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 08.02.2022թ.-ի թիվ 02/16.4/1048-2022 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2616-2022 գրությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.11.2016թ.-ին կնքվել է թիվ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր՝ 311 046 288 (երեք հարյուր տասնմեկ միլիոն քառասունվեց հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ գումարով: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետը՝ պատվիրատուի կողմից պայմանագիրը աշխատանքների չկատարած մասով մասնակի միակողմանի լուծվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 08.02.2022թ.-ի թիվ 02/16.4/1048-2022 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 17.12.2021թ.-ին՝ www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման հիմքով, սակայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 08.02.2022թ.-ի թիվ 02/16.4/1048-2022 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության

անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2616-2022 գրությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/72 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**